

ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Աղիքային վարակիչ հիվանդություններ

2023 թվականի հունվար ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 539 դեպք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մեծ է 1.2 անգամ: 2023 թվականի հունվար ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1 բռնկում, հիվանդացել է 4 երեխա:

2023 թվականի հունվար ամսին 2022 թվականի դեկտեմբեր ամսվա համեմատ հիվանդացությունը նվազել է մոտ 1.1 անգամ:

Սուր շնչառական հիվանդություններ

2023թ-ի թվականի 6-րդ շաբաթվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է սուր շնչառական վարակներով (ՍՇՎ) և գրիպով պայմանավորված հիվանդացության միջին ակտիվություն, նախորդ շաբաթվա համեմատ հիվանդացությունը գտնվում է միևնույն մակարդակի վրա: Մշտադիտարկումն ըստ մարզերի ցույց է տալիս, որ բոլոր մարզերում և Երևան քաղաքում արձանագրվել է ՍՇՎ-ով պայմանավորված հիվանդացության միջին ակտիվություն: Հիվանդացության ցուցանիշը 2022թ.-ի միևնույն ժամանակահատվածի համեմատ ցածր է 1.5 անգամ, իսկ համաճարակային շեմից բարձր է 1.8 անգամ: Ընդհանուր դեպքերի 69%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները, ցուցանիշը գրեթե անփոփոխ է նախորդ շաբաթվա համեմատ (նախորդ շաբաթ՝ 64%): 0-18 տարեկանների շրջանում առավել շատ աճ է գրանցվել է 5-14 տարեկանների շրջանում՝ (41%), իսկ 30-ից բարձր տարեկանների շրջանում հիվանդացությունը գտնվում է միևնույն մակարդակի վրա:

Շարունակական իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում վերջին իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են գրիպ Ա տեսակի H1N1, H3 ենթատեսակի և գրիպ Բ տեսակի հարուցիչներ, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության Sars-Cov-2 հարուցիչներ:

Կորոնավիրուսային հիվանդություն

2023 թվականի հունվարի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդության 446288 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 15082.4), որից՝ 306-ը (0.1%) ստանում են բուժում, 435398 (97.6%) անձ առողջացել է, 8722 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 294.8) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 183 դեպք (հ.գ. 6.2 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (97 դեպք, հ.գ. 3.3 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 89%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 11.7%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 6.6%:

Քիմիական թունավորումներ

2023 թվականի հունվար ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 214 դեպք, որոնց 40.2%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 59.8%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 43.4%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից թունավորումներն են, 27.6%-ը՝ ալկոհոլային թունավորումներ՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 17.3%-ը դեղամիջոցներով՝ ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 5.6%-ը՝ օճառների և վացող նյութերի թունավոր ազդեցությունից առաջացած, 2.8%-ը՝ թունաքիմիկատներից, 1.9%-ը թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 1.4%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2023թ. հունվար ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.1 անգամ:

Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հունվար ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազել է:

Հունվար ամսին սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի դեպք չի արձանագրվել:

Չոռնոզ և մակաբուծային հիվանդություններ

2023 թվականի հունվար ամսին հատուկ վտանգավոր վարակների՝ լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի, սիբիրյան խոցի դեպքեր չեն արձանագրվել, արձանագրվել է առաջնակի հայտնաբերված սուր բրուցելոզի 11 դեպք: Հանրապետությունում հունվարին հանգիստ է եղել մալարիայի համաճարակաբանական իրավիճակը, արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի երկու դեպք: Արձանագրվել է Լայմի հիվանդության 1 դեպք: Տգերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի, ռիկետոցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման, փոխանցողների վարակվածության վտանգի հետ:

Կառավարելի վարակիչ հիվանդություններ

2023 թվականի հունվար ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, կապույտ հազի և հարկապույտ հազի դեպքեր: